ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.02.2014թ.
212-ի 6

ՀՀ վարչապետ
պարոն Տիգրան Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին են դիմել "Դեմ եմ" նախաձեռնության անդամները եւ խնդրել են իրենց օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: ՀՀ որոշ քաղաքացիներ մինչեւ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2014թ.-ի հունվարի 24-ի որոշումն արդեն ընտրել էին կուտակային կենսաթոշակային վճարների համար ֆոնդ եւ կառավարիչ, իսկ որոշ գործատուներ արդեն հաշվարկել եւ փոխանցել են պարտադիր կուտակային վճարներ:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Եթե ՀՀ սահմանադրական դատարանի կողմից "Կուտակային կենսաթոշակների մասին" ՀՀ օրենքի՝ կուտակային վճարների պարտադիր բաղադրիչի վերաբերյալ հոդվածները ճանաչվեն ՀՀ սահմանադրությանը հակասող, ապա վերադարձվելու՞ են արդյոք այն քաղաքացիների գումարները, ում համար գործատուները հաշվարկել եւ փոխանցել են կուտակային վճարներ,
2. Եթե այո, ապա ինչպե՞ս (ի՞նչ մեխանիզմներով, ընթացակարգերով) է իրականացվելու գումարների վերադարձը (արդյոք հաշվարկվելու եւ փոխհատուցվելու՞ է բաց թողնված հնարավոր օգուտը եւ այլն),
3. Ո՞ր իրավական ակտով (ակտերով) են սահմանված գումարների վերադարձման ընթացակարգերը,
4. Խնդրում ենք տրամադրել այդ իրավական ակտի (ակտերի) պատճենները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան